

**ԷԿԼՕՑ ՈՒՎԿ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ**

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	
1. Հիմնական գործունեություն	9
2. Պատրաստման հիմունքներ	9
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	10
4. Զուտ տոկոսային եկամուտ	16
5. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	16
6. Արտարժույթի գործաքներից ստացված զուտ վնաս	16
7. Այլ գործառնական եկամուտ	16
8. Վարկերից և այլ փոխառություններից առաջացած կորուստներ	16
9. Անձնակազմի գծով ծախսեր	16
10. Այլ ընդանուր վարչական ծախսեր	17
11. Այլ ծախսեր	17
12. Շահութահարկի գծով ծախս	17
13. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17
14. Բանկերում տեղաբաշխված միջոցներ	18
15. Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	18
16. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	19
17. Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	19
18. Այլ ակտիվներ	20
19. Հաճախորդներից ներգրավված փոխառություններ	20
20. Այլ պարտավորություններ	20
21. Կանոնադրական Կապիտալ	20
22. Պայմանական պարտավորություններ	21
23. Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ	21
24. Ակտիվների և պարտավորությունների մարման ժանկետների վերլուծություն	22
25. Ռիսկի կառավարում	23
26. Կապիտալի համարժեքություն	27




BAKER TILLY ARMENIA

22 Hanrapetutyán Street
Area 16, 5th floor
0010 Yerevan
Republic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-307
Tel: +374(10) 544-309
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertillyarmenia.com

11/03/2014
N 011402

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Քելթեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն



Փ. Կևորգյան

Առևտրական ընկերությունների իրականացման
լիցենզիա թիվ 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և ֆինանսական կառավարության կողմից

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՄՊԸ
Մասնակիցներին

Մենք աուդիտի ենք ենթարկել ԷԿԼՕՖ ունիվերսալ վարկային կազմակերպություն ՄՊԸ-ի (այսուհետ՝ «Կազմակերպություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2013թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Մույն հաշվետվությունների՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման համար պատասխանատու է տնօրինությունը: Այդ պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա կարծիք արտահայտել սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտների համաձայն: Այս ստանդարտներով պահանջվում է, որպեսզի մենք պահպանենք էթիկայի կանոնները, և աուդիտը պլանավորենք և իրականացնենք ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը, ինչը թույլ է տալիս մշակել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, սակայն ոչ Կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության և տնօրինության կատարած հաշվապահական գնահատականների հիմնավորվածության, ինչպես նաև ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:


Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով տալիս են ճշմարիտ և իրական պատկերը, 2013թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ Կազմակերպության ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների:

Աուդիտոր

Մ. Հայրապետյան



11.03.2014թ.

ԷԿԼՕՑ ՈՒՎԿ ՄՂԸ


ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություն		
		2013թ.	2012թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	4	185,638	222,820
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	4	(47,826)	(68,390)
Զուտ տոկոսային եկամուտ		137,812	154,430
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	5	32,031	16,049
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(88)	(77)
Արտարժույթային գործարքներից ստացված զուտ վնաս	6	(148)	(559)
Այլ գործառնական եկամուտ	7	61,330	55,897
Գործառնական եկամուտ		230,937	225,740
Վարկերից և այլ փոխառություններից առաջացած կորուստներ	8	(52,094)	(110,181)
Անձնակազմի զծով ծախսեր	9	(53,163)	(51,629)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	10	(29,297)	(27,899)
Այլ ծախսեր	11	(6,799)	(6,975)
Շահույթ՝ մինչև հարկվելը		89,584	29,056
Շահութահարկի զծով ծախս	12	(18,328)	(6,384)
Շահույթ՝ հարկումից հետո		71,256	22,672
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք		71,256	22,672

Արմեն Մուրադյան
 Գործադիր տնօրեն

11.03.2014թ.



Կարինե Պապուջյան
 Գլխավոր հաշվապահ

ԷԿԼՕՑ ՈՒՎԿ ՄՊԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2013թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ

	Ծանոթագրություն	(հազար դրամ)	
		2013թ.	2012թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	13	2,750	7,006
Բանկերում տեղաքաշխված միջոցներ	14	16,662	108,900
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	15	1,303,998	957,989
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	9,611	15,370
Հետաձգված հարկային ակտիվներ		227	-
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	17	852	4,918
Այլ ակտիվներ	18	25,349	15,431
Ընդամենը՝ ակտիվներ		1,359,449	1,109,614
Պարտավորություններ			
Հաճախորդներից ներգրավված փոխառություններ	19	656,653	486,434
Վարձակալության գծով վճարվելիք գումարներ		220	220
Վճարվելիք տոկոսներ		10,778	9,226
Այլ պարտավորություններ	20	82,163	75,355
Ընդամենը՝ պարտավորություններ		749,814	571,235
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	21	538,379	515,707
Գլխավոր պահուստ		-	-
Կուտակված շահույթ		71,256	22,672
Ընդամենը՝ կապիտալ		609,635	538,379
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		1,359,449	1,109,614

Արմեն Մուրադյան
 Գործադիր տնօրեն
 11.03.2014թ.



Կարինե Պապուջյան
 Գլխավոր հաշվապահ

ԷԿԼՕՑ ՈՒՎԿ ՄՊԸ

ՄԵՓԱԿԱՆ ԿԱՂԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Կանոնադրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը կապիտալ
Մնացորդը 01 հունվարի 2012թ. <i>Բաժնետերերի հետ գործարքներ այդ թվում՝</i>	369,000	-	29,823	398,823
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	146,707			146,707
Շահաբաժին			(29,823)	(29,823)
Համապարփակ եկամուտ				
Շահույթ ժամանակշրջանի համար	-	-	22,672	22,672
Մնացորդը 31 դեկտեմբեր 2012թ.	515,707	-	22,672	538,379
Մնացորդը 01 հունվարի 2013թ. <i>Բաժնետերերի հետ գործարքներ այդ թվում՝</i>	515,707	-	22,672	538,379
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	22,672		(22,672)	-
Համապարփակ եկամուտ				
Շահույթ ժամանակշրջանի համար			71,256	71,256
Մնացորդը 31 դեկտեմբեր 2013թ.	538,379	-	71,256	609,635

Արմեն Մուրադյան
Գործադիր տնօրեն

11.03.2014թ.



Կարինե Պապուջյան
Գլխավոր հաշվապահ

ԷԿԼՕՑ ՈՒՎԿ ՄՊԸ


ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2013թ.	2012թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	181,110	218,584
Վճարված տոկոսներ	(40,444)	(59,164)
Կորուստների վերականգնում	55,438	45,345
Ստացված գուտ կոմիսիոն գումարներ	32,031	71,946
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(48,964)	(38,713)
Վճարված հարկեր	(19,015)	(28,965)
Դրամական միջոցների գուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	160,156	209,033
Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)	(257,535)	(157,081)
Ներգրավված միջոցների նվազում (ավելացում)	170,219	(144,468)
Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	(75,248)	125,000
Դրամական միջոցների գուտ հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունից	(162,564)	(176,549)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)	(1,272)	(123)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(574)	(531)
Դրամական միջոցների գուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	(1,846)	(654)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Վճարված շահաբաժիններ		(29,823)
Դրամական միջոցների գուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		(29,823)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(46)	(12,442)
Դրամական միջոցների գուտ հոսք	(4,300)	(10,435)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	7,077	17,512
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	2,777	7,077

Արմեն Մուրադյան
 Գործադիր տնօրեն

11.03.2014թ.



Կարինե Պապուջյան
 Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեություն

ԷԿԼՕՖ ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Կազմակերպություն) իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է:

Կազմակերպությունը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006թ. հոկտեմբերի 17-ի N 617 Ա որոշմամբ: Վարկային կազմակերպության գրանցման վկայականի համարն է՝ 17:

Համաձայն կանոնադրության Կազմակերպության գործունեության նպատակներն են.

- փոխառություններ և վարկեր տրամադրել գործունեության այն տեսակներին, որոնք հնարավորություն կտան ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատերերին) բավարարելու իրենց սոցիալ-տնտեսական պայմանները և ամրապնդելու իրենց ինքնուրույնությունը, ապահովելու այն գործունեությամբ, որի համար ստանում են փոխառություններ և վարկեր, որով կստեղծեն որոշակի եկամուտներ, ինչպես փոխառությունները և վարկերը ետ վերադարձնելու, այնպես էլ եկամուտներ ունենալու համար.
- փոխառություններ կամ վարկեր տրամադրել այն անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց, որոնք նպաստում են փոքր և միջին բիզնեսի կայացմանը և զարգացմանը, ինչպես նաև աշխատատեղերի ստեղծմանը և պահպանմանը.
- փոխառություններ կամ վարկեր տրամադրել եկեղեցիներին, եկեղեցահար հաստատություններին, քրիստոնեական կազմակերպություններին, ոչ առևտրային կազմակերպություններին և ՀՀ համայնքներին, որոնք ուղղված են սոցիալական, կրթական, առողջապահական և այլ ծրագրերի կատարմանը:

Կազմակերպության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Էջմիածին, Բաղրամյան 2/1: Կազմակերպության աշխատողների ցուցակային թվաքանակը 2013թ. կազմել է 27 մարդ:

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների ("ՖՀՄՄ") պահանջների համաձայն:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար՝ բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով:

Գործառնական և ներկայացման արժույթ

Կազմակերպության գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Գործունեության անընդհատությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտերը կհոսեն Կազմակերպություն, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Կազմակերպությունից, և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Տոկոսային ծախսեր և եկամուտներ

Ստացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը Վարկային կազմակերպությունը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

Միջնորդավճարներից և այլ նմանատիպ վճարներից եկամուտներ ու ծախսեր

Միջնորդավճարները, վարձավճարները և այլ եկամտային ու ծախսային հոդվածները հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով, ծառայությունների մատուցման ընթացքում:

Փոխարժեքային տարբերությունների ճանաչում

Արտարժույթային գործարքներից եկամուտները (վնասը) ներառում է արտարժույթով ակտիվների կամ պարտավորությունների վերագնահատումից եկամուտը (վնասը):

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթային հոդվածների վերահաշվարկից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ:

Ստորև ներկայացվում են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Կազմակերպության կողմից օգտագործված տարեվերջյան փոխարժեքները.

	<i>31 Դեկտեմբեր 2013թ.</i>	<i>31 Դեկտեմբեր 2012թ.</i>
ՀՀ դրամ/ 1ԱՄՆ դոլար	405.64	403.58

Հարկային հաշվառում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտներից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորությունների մեթոդի համաձայն: Հետաձգված հարկերը հաշվի են առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հետաձգված շահութահարկը առաջացել է գուդվիլի կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններում ակտիվների կամ պարտավորությունների նախնական ճանաչման ժամանակ և ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում գործում են նաև բազմաթիվ այլ գործառնական հարկեր, որոնք հաշվարկվում են ելնելով Կազմակերպության գործունեությունից: Այս հարկերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են՝ այլ ծախսեր՝ հոդվածում: Անուղակի հարկերի գումարներն ներառվում են այն նյութական կամ ոչ նյութական արժեքի գումարի մեջ, որին վերաբերվում են այդ հարկերը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են հաշիվները բանկերում: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում է ուղղակի մեթոդով:

Ֆինանսական գործիքներ

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը հաշվեկշռում ճանաչում է այն ժամանակ, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական առուվաճառքի դեպքում դրանք ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ: Սովորական ճանապարհով ձեռք բերված ֆինանսական գործիքները, որոնք հետագայում պետք է հաշվառվեն իրական արժեքով, գործարքի օրվա և պայմանագրի օրվա միջև ընկած ժամանակահատվածում հաշվառվում են նույն եղանակով, որով հաշվառվում են ձեռքբերված գործիքները:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները չափվում են իրական արժեքով՝ գումարած, ներդրումների դեպքում, գործարքին անմիջապես վերագրելի ծախսերը, բացառությամբ ֆինանսական արդյունքներում ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ներդրումները:

Սկզբնական ճանաչումից հետո, ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններին չվերաբերող բոլոր ֆինանսական պարտավորությունները (ներառյալ վաճառքի համար պահվողները) չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունները հետագայում հաշվառվում են իրական արժեքով:

Կազմակերպությունը իր ֆինանսական ակտիվները դասակարգել է ըստ հետևյալ դասերի՝ վարկեր և դեբիտորական պարտքեր, ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Ներդրումների դասակարգումը ըստ դասերի իրականացվում է ձեռքբերման պահին՝ առաջնորդվելով ղեկավարության կողմից հաստատված կանոններով: Սկզբնական ճանաչումից հետո Կազմակերպությունը կարող է, հնարավորության և անհրաժեշտության դեպքում, վերադասակարգել իր ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Վարկային կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Հետագայում վարկի հաշվեկշռային արժեքը որոշվում է օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաճախորդներին տրամադրված վարկերը, որոնք չունեն մարման հաստատուն ժամկետներ, հաշվառվում են ակնկալվող մարման ժամկետի վրա հիմնված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկման կորուստների պահուստներով:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Հաշվեկշռային ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման աստիճանը:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- լրացել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը
- Կազմակերպությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանել է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ համաձայն փոխանցման համաձայնարի, և
- Կազմակերպությունը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Կազմակերպությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը և չի փոխանցել ու չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, ինչպես նաև չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը ճանաչվում է մինչև Կազմակերպության ֆինանսական ակտիվում շարունակական մասնակցությունը: Փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև ստացած շարունակական մասնակցությունը որոշվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը կամ փոխհատուցման վճարվելիք գումարը, որ Կազմակերպությունից կարող է պահանջվել:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է այն ժամանակ, երբ այն մարվում կամ չեղյալ է համարվում, կամ լրանում է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է էականորեն տարբերվող պայմաններով, բայց միևնույն փոխառուին վերաբերող պարտավորությամբ, կամ էականորեն փոփոխվում են գոյություն ունեցող պարտավորության պայմանները, նման փոխանակումը կամ փոփոխությունը պետք է հանգեցնի սկզբնական պարտավորության ապաճանաչման և նոր պարտավորության ճանաչման, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարկային կազմակերպությունը ակտիվների հնարավոր կորուստների պահուստ

Վարկային կազմակերպության ակտիվների դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումը իրականացնում է “Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի” համաձայն:

Պաշարներ

Պաշարների հաշվապահական հաշվառումը կատարվում է համաձայն ՀՀՄՍ 2 ստանդարտի: Պաշարները հաշվառվում են ձեռք բերման արժեքով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարները ելքագրվում են “Առաջին Մուտք Առաջին Ելք” (ՖԻՖՈ) մեթոդով:

Վարձակալություն

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով): Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, հարկերը, ներկրման տուրքերը, պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Վարկային կազմակերպությանը ետ վերադարձման:

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ՝ հաշվի առնելով արժեզրկումից կուտակված կորուստը: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են

Համակարգչային սարքավորումներ	3 տարի
Փոխադրամիջոցներ	5 տարի
Գրասենյակային գույք	5 տարի
Վարձակալած հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսեր	20 տարի

Հիմնական միջոցների ընթացիկ վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Այն ծախսումները, որոնք բարձրացնում են հիմնական միջոցի միավորի շահագործման արդյունավետությունը սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշների համեմատ, ճանաչվում են որպես կապիտալ բնույթի ծախսումներ և ավելացվում են ակտիվի սկզբնական արժեքին: Նշված ծախսումներն ամորտիզացվում են կիրառելով գծային մեթոդը՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում, եթե դրանք չեն գերազանցում տվյալ տարվա (հիմնական միջոցի տվյալ միավորի արժեքին նշված ծախսումները ավելացնելու տարվա) հունվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցի մնացորդային արժեքը, հակառակ դեպքում ամորտիզացվում են օգտակար ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի դուրսգումից կամ իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

Հիմնական միջոցների իրական (շուկայական) արժեքի էական տատանման դեպքում դրանք վերագնահատվում են: Վերագնահատման արդյունքները արտացոլվում են ՀՀՄՍ 16-ով սահմանված կարգով:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:

Ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանակացած կուտակված արժեզրկման ծախս: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հատկանիշները: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, բայց տարին մեկ անգամ ստուգվում են արժեզրկման համար անհատական կամ դրամային միջոցներ ստեղծող միավորի մակարդակով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ պարզելու համար, թե արդյոք ակտիվի օգտակար ծառայության ժամկետը դեռևս անորոշ է գնահատվում:

Փոխառություններ

Փոխառությունները, որոնք ներառում են հաճախորդներից ներգրավված փոխառություններ, սկզբնապես ճանաչվում են ստացված զուտ մուտքերի իրական արժեքով՝ հանած անմիջապես վերագրելի գործառնական ծախսերը: Սկզբնական գնահատումից հետո փոխառություններն հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում այն ժամանակ, երբ ապաճանաչվում են պարտավորությունները, ինչպես նաև ամորտիզացիոն ընթացակարգի միջոցով:

Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին

Վարկային կազմակերպությունում աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը պետական սոցիալական ապահովագրության հիմնադրամին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված հիմնադրամին հատկացումների հետ կապված ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Կազմակերպությունն անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվանցվում են և զուտ գումարը արտացոլվում է հաշվեկշռում, եթե գոյություն ունի ճանաչված գումարների հաշվանցման օրենսդրորեն հաստատված իրավունք, և առկա է զուտ գումարների հիման վրա հաշվանցման կամ ակտիվի իրացման ու միաժամանակ պարտավորության մարման մտադրություն:

4. Զուտ տոկոսային եկամուտ

	<i>հազար դրամ</i>	
	2013թ.	2012թ.
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	168,030	215,443
Ժամկետային ավանդներ բանկերում	16,948	6,814
Այլ տոկոսային եկամուտներ	660	563
Ընդամենը տոկոսային եկամուտ	185,638	222,820
Տոկոսային ծախս		
Հաճախորդներից ստացված փոխառություններ	(44,630)	(65,315)
Այլ տոկոսային ծախսեր	(3,196)	(3,075)
Ընդամենը տոկոսային ծախս	(47,826)	(68,390)
Զուտ տոկոսային եկամուտ	137,812	154,430

5. Կումիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ

	<i>հազար դրամ</i>	
	2013թ.	2012թ.
Հաճախորդներին տրված վարկերի սպասարկում	32,031	16,049
	32,031	16,049

6. Արտարժույթի գործաքննչից ստացված վնաս

	<i>հազար դրամ</i>	
	2013թ.	2012թ.
Արտարժույթի վաճառքից ստացված գուտ վնաս	(103)	(55)
Արտարժույթի վերագնահատումից ստացված գուտ վնաս	(45)	(504)
	(148)	(559)

7. Այլ գործառնական եկամուտ

	<i>հազար դրամ</i>	
	2013թ.	2012թ.
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	61,330	55,897
	61,330	55,897

8. Վարկերից և այլ փոխառություններից առաջացած կորուստներ

	<i>հազար դրամ</i>	
	2013թ.	2012թ.
Վարկերի, ավանդների, դեբ. պարտքերի կորուստների վերականգնումից եկամուտ	135,670	121,993
Վարկերի, ավանդների, դեբ. պարտքերի կորուստներին հատկացում	(187,764)	(232,174)
	(52,094)	(110,181)

9. Անձնակազմի գծով ծախսեր

	<i>հազար դրամ</i>	
	2013թ.	2012թ.
Աշխատավարձեր	(47,602)	(41,555)
Պարգևավճարներ	(1,320)	(897)
Սոց. վճարներ	-	(5,716)
Անձնակազմի այլ վճարներ	(4,241)	(3,462)
	53,163	51,629

10. Այլ ընդանուր վարչական ծախսեր

	2013թ.	<i>հազար դրամ</i> 2012թ.
Շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության ծախսեր	(3,840)	(4,471)
Շենքի տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(620)	(716)
Սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(84)	(41)
Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր	(5,071)	(5,724)
Փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(4,721)	(4,407)
Անդամավճարներ	(960)	(880)
Զփոխհատուցվող հարկեր և տուրքեր	(709)	(1,618)
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	(60)	(7)
Գործուղման ծախսեր	(2,092)	(750)
Ապահովագրության գծով ծախսեր	(1,287)	(964)
Գրասենյակային ծախսեր	(1,514)	(1,439)
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(3,000)	(2,460)
Այլ գործառնական ծախսեր	(50)	(217)
Ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով ծախսեր	(777)	-
Այլ կառավարչական ծախսեր	(4,512)	(4,205)
	(29,297)	(27,899)

11. Այլ ծախսեր

	2013թ.	<i>հազար դրամ</i> 2012թ.
Ամորտիզացիոն մասհանումներ	(4,244)	(6,756)
Տույժեր ու տուգանքներ	(1,000)	-
Այլ ծախսեր	(1,555)	(219)
	(6,799)	(6,975)

12. Շահութահարկի գծով ծախս

	2013թ.	<i>հազար դրամ</i> 2012թ.
Ընթացիկ հարկային ծախսեր	(18,328)	(6,384)
	(18,328)	(6,384)

13. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2013թ.	<i>հազար դրամ</i> 2012թ.
Ընթացիկ հաշիվներ բանկում	2,777	7,077
Ընթացիկ հաշիվների պահուստ	(27)	(71)
	2,750	7,006

14. Բանկերում տեղաբաշխված միջոցներ

	2013թ.	<i>հազար դրամ</i> 2012թ.
Բանկերում ներդրված ավանդներ	16,830	110,000
Բանկերում ներդրված ավանդների պահուստ	(168)	(1,100)
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպ. նկատմամբ	16,662	108,900

15. Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին

	2013թ.	<i>հազար դրամ</i> 2012թ.
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	1,326,240	1,008,757
Մտացվելիք տոկոսներ	6,378	10,448
Վարկերի արժեզրկման պահուստ (տես. ծան. 16)	(28,620)	(61,216)
Ընդամենը վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	1,303,998	957,989

Վարկերի և այլ փոխառությունների պահուստավորում

	2013թ.	<i>հազար դրամ</i> 2012թ.
սկզբնական մնացորդ,	61,216	18,240
պահուստին մասհանումներ,	345,222	356,220
պահուստի օգտագործում,	(377,818)	(313,244)
վերջնական մնացորդ.	28,620	61,216

Տրամադրված վարկերի վերլուծությունն ըստ դասերի ունի հետևյալ տեսքը.

	2013թ.	<i>հազար դրամ</i> 2012թ.
Գյուղատնտեսություն	869,764	601,022
Արդյունաբերություն	135,694	57,217
Շինարարություն	29,087	43,054
Առևտուր	162,174	234,986
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	23,086	-
Կեցության և հանրային սննդի կազմակերպում	34,868	28,928
Տեղեկատվություն և կապ	2,659	1,649
Առողջապահություն	2,820	2,327
Հիփոթեքային վարկեր	4,628	7,066
Մյառողական վարկեր	61,460	32,508
	1,326,240	1,008,757
Մտացվելիք տոկոսներ	6,378	10,448
Արժեզրկումից պահուստներ վարկերի գծով	(28,620)	(61,216)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	1,303,998	957,989

16. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	<i>հազար դրամ</i>					
	Գրասենյակային գույք	Համակարգչ. սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում	Համակարգչ. ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1.1.2013	4,163	4,557	34,485	10,502	3,099	56,806
Ավելացում	122	92	995	278	360	1,847
Օտարում կամ լուծարում	-	-	(17,026)	-	(119)	(17,145)
Մնացորդը առ 31.12.2013	4,285	4,649	18,454	10,780	3,340	41,508
Մաշվածք						
Մնացորդը առ 1.1.2013	3,498	4,378	27,845	3,528	2,186	41,435
Ավելացում	293	204	2,846	544	359	4,246
Նվազեցում	-	-	(13,665)	-	(119)	(13,784)
Մնացորդը առ 31.12.2013	3,791	4,582	17,026	4,072	2,426	31,897
						0
Հաշվեկշռային արժեք առ 31.12.2013	494	67	1,428	6,708	914	9,611

	<i>հազար դրամ</i>					
	Գրասենյակային գույք	Համակարգչ. սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում	Համակարգչ. ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Մնացորդը առ 1.1.2012	4,078	4,466	34,377	10,502	2,732	56,155
Ավելացում	85	91	108	-	367	651
Օտարում կամ լուծարում	-	-	-	-	-	-
Մնացորդը առ 31.12.2012	4,163	4,557	34,485	10,502	3,099	56,806
Մաշվածք						
Մնացորդը առ 31.12.2012	3,002	3,949	22,932	2,984	1,797	34,664
Ավելացում	496	736	4,914	544	389	7,079
Նվազեցում	-	(307)	-	-	-	(307)
Մնացորդը առ 31.12.2012	3,498	4,378	27,846	3,528	2,186	41,436
Հաշվեկշռային արժեք առ 31.12.2012	665	179	6,639	6,974	913	15,370

17. Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

	<i>հազար դրամ</i>	
	2013թ.	2012թ.
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	971	11,189
Դեբիտորական պարտքերի պահուստ (տես ծան. 16)	(119)	(6,271)
	852	4,918

Դերհտորական պարտքերի և այլ ակտիվների պահուստավորում

	<i>հազար դրամ</i>	
	2013թ.	2012թ.
սկզբնական մնացորդ,	6,271	208
պահուստին մասհանումներ,	4,569	6,640
պահուստի օգտագործում,	(10,721)	(577)
վերջնական մնացորդ.	119	6,271

18. Այլ ակտիվներ

	<i>հազար դրամ</i>	
	2013թ.	2012թ.
Արագամաշ առարկաներ	47	214
Այլ ակտիվներ	25,302	15,217
	25,349	15,431

19. Հաճախորդներից ներգրավված փոխառություններ

	<i>հազար դրամ</i>	
	2013թ.	2012թ.
Հիմնարկներից ստացված փոխառություններ	8,788	16,553
ԳՖԿ ԾԻԳ ստացված փոխառություններ	155,510	13,850
Այլ ոչ առևտրային կազմակերպությունից ստացված փոխառություն	380,220	380,220
Մասնակցից ստացված փոխառություն	112,135	75,811
	656,653	486,434

20. Այլ պարտավորություններ

	<i>հազար դրամ</i>	
	2013թ.	2012թ.
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	62,594	66,782
Աշխատավարձ և նմանատիպ վճարներ	2,561	3,461
Պարտավորություններ բյուջեի նկատմամբ	10,524	114
Այլ պարտավորություններ	6,484	4,998
Ընդամենը այլ պարտավորություններ	82,163	75,355

21. Կանոնադրական Կապիտալ

Կանոնադրական կապիտալը 538,379 հազար ՀՀ դրամ է, որը կազմված է ՄՊԸ-ի 1 սեփականատիրոջից՝ ԷԿԼՕՏ Հիմնադրամ՝ 100%:

22. Պայմանական պարտավորություններ

Հարկային ու իրավական պարտավորություններ

Կազմակերպությունը գործունեություն է ծավալել համաձայն օրենսդրության պահանջների:

Առ 31 դեկտեմբեր 2013թ. Կազմակերպության դեմ չի ներկայացվել ոչ մի դատական հայց կամ բողոք: Այդ պատճառով Կազմակերպությունը չի նախատեսել նման հարկային կամ դատական պարտավորությունների պահուստ:

23. Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24-ի՝ “Փոխկապակցված կողմերի բացահայտում”, կողմերը համարվում են փոխկապակցված, եթե մի կողմը հնարավորություն ունի վերահսկել մյուս կողմին կամ էական ազդեցություն ունենալ մյուս կողմի ֆինանսական և գործառնական որոշումների կայացման վրա: Սույն ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից, փոխկապակցված կողմերը ներառում են Կազմակերպության ղեկավարության անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այլ անձանց և կազմակերպություններին, որոնք փոխկապակցված են կամ համապատասխանորեն վերահսկվում են նրանց կողմից:

Ընկերությունը ԷԿԼՕՖ Հիմնադրամից և ԷԿԼՕՖ Միջազգայինից ունի ներգավված փոխառություններ:

	31.12.2012թ.	Ավելացում	Նվազում	31.12.2013թ.
Ներգրավված փոխառություն ԷԿԼՕՖ Հիմնադրամ	75,811	105,900	(69,575)	112,136
Ներգրավված փոխառության դիմաց հաշվարկված և վճարված տոկոսներ ԷԿԼՕՖ Հիմնադրամ	323	9,736	(9,466)	593
Ներգրավված փոխառություն ԷԿԼՕՖ Միջազգային	380,220	-	-	380,220
Ներգրավված փոխառության համար հաշվարկված և վճարված տոկոսներ ԷԿԼՕՖ Միջազգային	8,823	26,688	(26,615)	8,896
Ընդամենը	465,177	142,324	(105,656)	501,845

Ղեկավար անձնակազմի գծով փոխհատուցումները ներկայացված են ստորև

	2013թ.	<i>հազար դրամ</i> 2012թ.
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	25,801	24,632
Մոնիթինգային ապահովագրության ծախսեր	-	2,105
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով փոխհատուցումներ	25,801	26,737

24. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը ըստ նրանց սպասվող մարման ժամկետների:

առ 31 դեկտեմբերի 2013թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-3 տարի	հազար դրամ 3 տարուց ավել	Ընդամենը
Ակտիվներ	2,777	-	16,830	-	-	19,607
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	8,234	-	-	8,234
Հաճախորդներին տրված վարկեր	126,754	108,227	451,275	608,676	31,308	1,326,240
Այլ ակտիվներ	6,004	1	7,484	-	-	13,489
	135,535	108,228	483,823	608,676	31,308	1,367,570
Պարտավորություններ						
Վարկեր և փոխառություններ	-	-	-	-	656,653	656,653
Այլ պարտավորություններ	12,335	8,896	13,578	-	-	34,809
	12,335	8,896	13,578	-	656,653	691,462
Զուտ դիրք	123,200	99,332	470,245	608,676	(625,345)	676,108
Կուտակային ձեռքվածք	123,200	222,532	692,777	1,301,453	676,108	

առ 31 դեկտեմբերի 2012թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-3 տարի	հազար դրամ 3 տարուց ավել	Ընդամենը
Ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,077	110,000			-	117,077
Պահանջներ կառավարության նկատմամբ			8,234			8,234
Հաճախորդներին տրված վարկեր	195,943	85,202	348,219	364,627	14,766	1,008,757
Այլ ակտիվներ	3,946	208				4,154
	206,966	195,410	356,453	364,627	14,766	1,138,222
Պարտավորություններ						
Վարկեր և փոխառություններ		22,739		53,071	396,773	472,583
Այլ պարտավորություններ	9,195	6,781			13,850	29,826
	9,195	29,520		53,071	410,623	502,409
Զուտ դիրք	197,771	165,890	356,453	311,556	(395,857)	635,813
Կուտակային ձեռքվածք	197,771	363,661	720,114	1,031,670	635,813	

25. Ռիսկի կառավարում

Կազմակերպության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համախմբության որոշակի մակարդակի վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկը հանդիսանում է ֆինանսական գործունեության անբաժանելի մասը, և գործառնական ռիսկերը գործունեության ծավալման անխուսափելի հետևանքն են: Այդ պատճառով Կազմակերպության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Կազմակերպության վիճակի վրա դրանց անցանկալի ազդեցությունները:

Կազմակերպությունը նպատակ ունի ախտորոշելու և վերլուծելու ռիսկերը, սահմանելու ռիսկի համապատասխան սահմանչափերը և վերահսկումները, և վերահսկելու ռիսկերը և համապատասխանությունը սահմանաչափերին՝ օգտագործելով արժանահավատ և ժամանակակից տեղեկատվական համակարգերը:

Ռիսկի կառավարումը իրականացնում է Կազմակերպության ղեկավար անձնակազմը: Ղեկավարությունը ախտորոշում, գնահատում և հեջավորում է ֆինանսական ռիսկերը՝ սերտորեն համագործակցելով Կազմակերպության գործառնական միավորների հետ: Ռիսկի կարևորագույն տեսակներն են վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը, գործառնական ռիսկը և այլ գործառնական ռիսկերը: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը:

25.1 Վարկային ռիսկ

Կազմակերպությունը ենթարկվում է վարկային ռիսկի, որն իրենից ներկայացնում է ռիսկ, որ պայմանագրի մյուս կողմը, չիրականացնելով իր պարտավորությունը, Կազմակերպությանը կպատճառի ֆինանսական վնաս: Վարկային ռիսկը Կազմակերպության գործունեության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով Ղեկավար անձնակազմը ավելի մեծ ուշադրությամբ է վերահսկում այն: Վարկային ռիսկը հիմնականում կապված է վարկային գործունեության հետ:

Վարկային ռիսկի առավելագույն չափն առանց գրավի կամ այլ վարկային ապահովման

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է վարկային ռիսկի վատագույն տարբերակը առ 31 դեկտեմբեր 2013թ. և 2012թ., առանց հաշվի առնելու ցանկացած գրավ կամ այլ վարկային ապահովումներ: Հաշվեկշռային ակտիվների առումով, վարկային ռիսկերը հիմնված են հաշվեկշռային գուտ արժեքների վրա:

	Ծանոթագրություն	Համախառն առավելագույն ռիսկի չափը առ 31 դեկտեմբեր 2013թ.	Համախառն առավելագույն ռիսկի չափը առ 31 դեկտեմբեր 2012թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	2,777	7,077
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	16,830	110,000
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	15	1,326,240	1,008,757
Ընդամենը վարկային ռիսկ		1,345,847	1,125,834

Վարկային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեզմենտներ

2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության պարտքային ռիսկերը ամբողջությամբ կենտրոնացված են ՀՀ-ում:

Տնտեսության ճյուղեր

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Կազմակերպության վարկային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով առ դեկտեմբերի 31-ը՝ դասակարգված ըստ պայմանագրային կողմի տնտեսության ճյուղի:

	Ֆին. հաստատություններ	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն	Շինարարություն	Առևտուր	Փոխադրամիջոցներ	հազար դրամ	
							Այլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,777	-	-	-	-	-	-	2,777
Պահանջներ ֆինանսական կազմակերպություններից	16,830	-	-	-	-	-	-	16,830
Հաճախորդներին տրված վարկեր	-	869,764	135,694	29,087	162,174	23,086	106,435	1,326,240
Առ 31/12/2013թ.	19,607	869,764	135,694	29,087	162,174	23,086	106,435	1,345,847
Առ 31/12/2012թ.	117,077	601,022	57,217	43,054	234,986	-	72,478	1,125,834

Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Կազմակերպությունը ղեկավարում, սահմանափակում և վերահսկում է ցանկացած բացահայտված վարկային ռիսկի կենտրոնացումները՝ մասնավորապես, մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև արդյունաբերական և աշխարհագրական սեզմենտների կտրվածքով:

Վարկային ռիսկի մակարդակը վերահսկելու նպատակով Կազմակերպությունը սահմանում է մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի նկատմամբ ռիսկի ընդունելի մակարդակի սահմանաչափերը: Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և ենթակա են տարեկան, իսկ անհրաժեշտության դեպքում, ավելի հաճախակի վերանայման:

Վարկային ռիսկի չափը կառավարվում է նաև փոխառուների և հնարավոր փոխառուների՝ մայր գումարի և տոկոսավճարների վճարման հնարավորության վերլուծության և, անհրաժեշտության դեպքում, սահմանաչափերի փոփոխության միջոցով:

Գրավ

Կազմակերպությունը կիրառում է մի շարք կանոններ և միջոցներ՝ վարկային ռիսկը մեղմելու նպատակով: Դրանցից ամենատարածվածը տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելն է, որը համընդհանուր գործելակերպ է: Կազմակերպությունը սահմանում է ուղեցույցներ՝ գրավի որոշակի տեսակների ընդունելի լինելու և վարկային ռիսկի գազաման վերաբերյալ: Վարկերի և փոխատվությունների դիմաց հիմնական գրավների տեսակներն են.

- Հիփոթեքային պայմանագրով գրավադրված անշարժ գույք
- Երաշխավորությունները

Ստորն ներկայացված է վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ գրավի տեսակների.

	2013թ.	<i>հազար դրամ</i> 2012թ.
Անշարժ գույք	933,558	715,345
Սարքավորումներ և այլ հիմնական միջոցներ	9,737	5,866
Փոխադրամիջոցներ	57,449	11,681
Երաշխավորություն	323,365	269,024
Այլ գրավ	2,131	6,841
Ընդամենը վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	1,326,240	1,008,757

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության դուրս գրված վարկերը, ունեն հետևյալ տեսքը

	2013թ.	<i>հազար դրամ</i> 2012թ.
Դուրս գրված վարկեր	405,941	196,109
Ծախս	(405,941)	(196,109)
Ընդամենը դուրս գրված վարկեր	405,941	196,109

25.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայում առկա փոփոխությունների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքի և փոխարժեքի տատանումները: Կազմակերպությունը չի տեղաբաշխել և չի ստացել տատանվող տոկոսադրույքով վարկեր:

Փոխարժեքային ռիսկ

Փոխարժեքային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կփոփոխվի արտարժույթի փոխարժեքի տատանումների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Կազմակերպությունը արտարժույթով ֆինանսական գործիքներ չունի:

25.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Կազմակերպությունը չի կարողանա մարել իր վճարման պարտավորությունները սթրեսային և նորմալ իրավիճակներում: Այս ռիսկի սահմանափակման համար Ղեկավարությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Կազմակերպության իրացվելիության վերահսկողությունը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ինչպես նաև ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել իրացվելիության հաշվեկշռային գործակիցները: Ստորև ներկայացված աղյուսակը ամփոփում է Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ըստ մարման ժամկետների՝ 2013թ. 31 դեկտեմբերի դրությամբ, հիմնվելով չզեղչված վճարումների պայմանագրային պարտավորությունների վրա: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ դրանք կպահանջվեն անմիջապես:

Առ 31 դեկտեմբեր 2013

	Ցպահանջ, մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավել	հազար դրամ Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր և փոխառություններ	-	-	-	-	656,653	656,653
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,882	8,896	-	-	-	10,778
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	1,882	8,896	-	-	-	667,431

Առ 31 դեկտեմբեր 2012

	Ցպահանջ, մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր և փոխառություններ	-	22,739	-	53,071	396,773	472,583
Այլ ֆինանսական պարտավորություններ	403	6,781	-	-	-	7,184
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	403	29,520	-	53,071	396,773	479,767

26. Կապիտալի համարժեքություն

Կազմակերպության կապիտալի կառավարման առաջնային նպատակն այն է, որ Կազմակերպությունը համատասխանի հաստատված արտաքին պահանջերին: Կազմակերպությունը շահագրգռված է պահպանելու բարձր վարկային վարկանիշ և կապիտալի առողջ նորմատիվներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և սեփական կապիտալը հետևողականորեն աճեցնելու գործում:

Կազմակերպությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը՝ կատարելով ճշգրտումներ, որոնք առաջանում են տնտեսական պայմանների և ռիսկի բնույթի փոփոխության հետևանքով: Նախորդ տարվա համեմատ փոփոխություններ չեն եղել Կազմակերպության նպատակներում, քաղաքականությունում և գործողություններում:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկի կշիռների ստորակարգության՝ դասակարգվելով համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի բնույթի և զնահատման:

ՀՀ Կենտրոնական բանկը սահմանել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափը՝ 150,000 հազար ՀՀ դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Կազմակերպությունը պահպանել է կապիտալին ներակայացվող բոլոր պահանջները: Հաշվետու տարում միջին ընդհանուր կապիտալը կազմել է՝ 540,642 հազ. ՀՀ դրամ: